ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.2187130
20-08-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՄԱՐԳՈ ՂԱԶԱՐՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0039, ՇԵՆԳԱՎԻԹ,*
ՉԵԽՈՎԻ Փ., 17, 15
mag198824@gmail.com : 37477174679

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում իրականացվող «ՀՀ բուսաբուծության ճյուղում ներդրումային քաղաքականության հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով ատենախոսական հետազոտության շրջանակում խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն 2010–2025 թվականներին ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության ոլորտում իրականացված ներդրումների վերաբերյալ։

Խնդրում եմ, հնարավորության դեպքում, յուրաքանչյուր տարվա համար ներկայացնել ներդրումների ընդհանուր ծավալը՝ մլն դրամով՝ ըստ հետևյալ ֆինանսավորման աղբյուրների.

1. պետական ներդրումներ՝ ՀՀ պետական բյուջեի, պետական ծրագրերի և պետական մարմինների միջոցներով,
2. մասնավոր ներդրումներ՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և գյուղացիական տնտեսությունների միջոցներով,
3. միջազգային ներդրումներ և ծրագրեր՝ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, հիմնադրամների և դոնոր կազմակերպությունների միջոցներով։

Եթե հնարավոր է, խնդրում եմ գյուղատնտեսության ընդհանուր ներդրումներից առանձին ներկայացնել բուսաբուծության ոլորտում իրականացված ներդրումները։

Բուսաբուծության ոլորտի տվյալների առկայության դեպքում խնդրում եմ ներդրումները հնարավորության սահմաններում դասակարգել նաև ըստ հիմնական ուղղությունների՝

- գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում,

Digitally signed by ՄԱՐԳՈ ՂԱԶԱՐՅԱՆ
7407880476
2026-08-20 20:26:58 GMT+04:00

- ոռոգման և մելիորացիոն համակարգերի կառուցում կամ արդիականացում,
- ջերմոցների և պաշտպանված գրունտի տնտեսությունների ստեղծում,
- ինտենսիվ և բազմամյա այգիների հիմնում,
- հակակարկտային համակարգերի և ցանցերի տեղադրում,
- պահեստների, սառնարանային տնտեսությունների և հետբերքահավաքային ենթակառուցվածքների ստեղծում,
- այլ ներդրումային ծրագրեր։

Եթե ներդրումների տարեկան ընդհանուր ծավալները մարզպետարանի տեղեկատվական բազայում չեն հաշվարկվում, սակայն առկա են առանձին ներդրումային ծրագրերի վերաբերյալ տվյալներ, խնդրում եմ տրամադրել դրանց ցանկը՝ հնարավորության դեպքում նշելով՝

- ծրագրի անվանումը կամ համառոտ նկարագրությունը,
- իրականացման տարին,
- համայնքը կամ բնակավայրը,
- ներդրման գումարը,
- ֆինանսավորման աղբյուրը՝ պետական, մասնավոր կամ միջազգային,
- ոլորտը՝ բուսաբուծություն, անասնաբուծություն կամ գյուղատնտեսության այլ ուղղություն։

Եթե տվյալները հասանելի են միայն որոշ տարիների համար, խնդրում եմ տրամադրել առկա ժամանակահատվածի տեղեկատվությունը։ Եթե նշված տվյալները չեն հավաքագրվում կամ չեն պահպանվում մարզպետարանում, խնդրում եմ այդ մասին ևս նշել պատասխան գրության մեջ։

Տեղեկատվությունն օգտագործվելու է բացառապես գիտական նպատակներով։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Դիմող՝

ՄԱՐԳՈ ՂԱԶԱՐՅԱՆ